«ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ

Նոր հասկացությունների (կոնցեպտների) ի հայտ գալը, դրանց արմատավորվելը տարբեր գիտությունների խոսույթային դաշտերում լուրջ քննարկման առարկա են դարձել հետազոտողների համար: Տեսության ակունքները պարզելը, դրա ձևավորման գործընթացին հետևելը, տարբեր երկրների գիտական շրջանակներում ճանաչում ստանալը անհրաժեշտ են ոչ միայն դրա լիարժեք տեսական իմաստավորման, այլև քաղաքական ռազմավարություններ մշակելիս վերջիններիս կիրառման հաջողությունը վերլուծելու և կանխատեսելու համար: «Փափուկ ուժ» հասկացությունը բացառություն չէ:

1990 թ. Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայը «փափուկ ուժ» հասկացությն առաջին անգամ շարադրեց «Առաջնորդության դատապարտվածները. ամերիկյան իշխանության փոփոխվող բնույթը» աշխատության մեջ: Այդ հասկացության ներքո նա հասկանում էր պետական ակտորի ունակությունը՝ ձևավորելու այլ ակտորների նախապատվությունները՝ օգտագործելով իր գրավչությունը նրանց աչքերում: Դա վերաբերում էր ԱՄՆ մշակույթին, քաղաքական արժեքներին և արտաքին քաղաքականությանը: Հեղինակը կարևորում էր այն, որ նոր մեթոդները չենթադրեին բռնի միջոցների կիրառում, սակայն ազդեին հասարակական կարծիքի վրա՝ թույլ տալով փոխել հասարակական տրամադրությունները և առաջ մղել փոխանցող ակտորի շահերը այլ երկրում: Հիշյալ աշխատությունում Ջ. Նայը նշել է իշխանության երեք չափում, որոնց տիրապետում է ԱՄՆ-ն՝ 1) ռազմական, 2) տնտեսական և 3) չափում, որը նա անվանել է «փափուկ ուժ»[1]: Վերջինս նա սահմանեց հետևյալ կերպ. «Փափուկ ուժը ուրիշների վրա ազդեցություն գործելու ունակությունն է՝ դաշնակիցներ գտնելու, օրակարգ մշակելու, համոզելու, գրավելու միջոցով՝ նպատակ ունենալով հասնելու նախընտրելի արդյունքի»[2]: «Փափուկ ուժը հենվում է ուրիշների նախապատվությունները ձևավորելու ունակության վրա: «Փափուկ ուժի» ռեսուրսները կապված են դաշնակիցներ գրավելու ունակության հետ: Այդ ներգրավումը հաճախ հանգեցնում է լուռ համաձայնության, մինչդեռ «կոշտ ուժի» ռեսուրսները սովորաբար նմանադրվում են հարկադ-

[1] Տե՛ս **Nye J.** Bound to Lead: The Changing Nature of American Power. N.Y.: Basic Books, 1990, էջ 307:

[2] **Nye J.** The Future of Power. New York: Public Affairs, 2011, p. 20-21.

րիչ վարքագծի հետ (պատժամիջոցներ, կաշառում, ուժի կիրառում): Ավելի ակներև էր դարձել, որ ռազմական ուժ կիրառելու հնարավորությունները էականորեն սահմանափակվել են, իսկ սեփական ազդեցությունը մեծացնելու պահանջմունքը լիովին իրացված չէ: Ջ. Նայը «փափուկ ուժի» հասկացությթը մշակեց որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաձևում, որն արդեն չափից դուրս շատ էր սևեռված ամերիկյան ռազմական գերազանցության վրա հետկոմունիստական աշխարհում, որում Միացյալ Նահանգները իրապես միակ գերտերությունն է («կոշտ ուժի» ձևաչափով): Պատահական չէ, որ որոշ պետությունների (Շվեյցարիա, Շվեդիա, Ֆրանսիա և այլն) գրավչությունն ու ազդեցիկությունը էականորեն գերազանցում են նրանց ՀՆԱ-ն և ուժային, առաջին հերթին՝ ռազմական բաղադարիչը հզորացնելու ծախսերը:

2004 թ. Ջ. Նայը «Փափուկ ուժ: Համաշխարհային քաղաքականության մեջ հաջողության միջոցները» գրքում ներկայացրեց «փափուկ ուժի» ընդլայնված մեկնաբանությունը, որով նա մանրամասնեց իր հասկացությթը և այն արտաքին քաղաքականության մեջ օգտագործելու գործնական խորհուրդներ շարադրեց: Ջ. Նայի՝ «փափուկ ուժի» սահմանումը յուրովի տարբերվում է ազդեցության մյուս բոլոր տեսակներից: Համաձայն Նայի՝ գոյություն ունի ուժի երեք տեսակ. հարկադրանքի ուժ (իր կամքը պարտադրելը և ճնշելը կոշտ ուժի միջոցով), համոզումի ուժ (նյութական ռեսուրսների հաշվին համոզելը) և մշակութային ազդեցության կամ մշակութային դրդման ուժ (դրդել մարդուն կամովի ցանկանալ այն, ինչ ինքդ ես ցանկանում)[3]:

Մեր կարծիքով, հենց մշակութային ազդեցության ուժն է լայն իմաստով (ապրելակերպ, նորմեր ու արժեքներ) ավելի ստույգ արտահայտում փափուկ ուժի գործողությունների էությունը, որոնք ուղղված են ազգերին ու ժողովուրդներին դրդելու, որպեսզի կամովի ընդունեն քաղաքականության այլ սուբյեկտի տեսակետները:

Նայի հիշատակած երկրորդ տեսակի ուժը արդարացիորեն սահմանազատված է մյուս երկու «եզրայիններից»՝ ռազմականից և մշակութայինից. այն դժվար է դասել այդ երկուսից որևէ մեկին: Այդուհանդերձ, մեր կարծիքով, նյութական խթանմամբ համոզումի ուժը թեև չափազանց շատ է տարածված մարդկային գործունեության մեջ, սակայն դա հիմնովին անկախ մի բան չէ, այլ ավելի շուտ պետք է դիտվի որպես երկու «եզրայիններին» ուղեկցող հնարավոր հավելուրդ: Ջ. Նայը համոզված էր, որ «փափուկ ուժը» արտաքին քաղաքական և ներքաղաքական գործոնների համախումբ է:

Արտաքին գործոններից են.

1) պետության արտաքին քաղաքականության ռազմավարությունը,
2) երկրի հեղինակությունը միջազգային ասպարեզում և նրա դերը

[3] Տե՛ս **Nye Jr. Joseph S.** Soft Power. The Means to Success in World Politics, First ed. N.Y.: Public Affairs, 2004, էջ 2:

համաշխարհային քաղաքականության մեջ,

3) քաղաքակրթական բաղադրիչը (յուրաքանչյուր երկիր ունի իր ազգային մշակույթը, բայց ոչ յուրաքանչյուր երկիր է այս կամ այն քաղաքակրթության պատվարը),

4) արտաքին տնտեսական կապերը,

5) տեղեկատվական ներուժն ու հաղորդակցային շարժունակությունը:

Ներքին գործոններից են.

1) պետության ռազմավարությունն ու զարգացման ուղղությունը,

2) գաղափարախոսությունը,

3) քաղաքացիների կենսամակարդակն ու բարեկեցության աստիճանը,

4) արժեհամակարգը (այդ թվում և ազգային գաղափարը):

«Փափուկ ուժի» ազդեցությունը մեծ է երկու հիմնական գործոնների վրա. 1) նյութական գործոն (ապրանքներ, ծառայություններ, կապիտալ, տեխնոլոգիաներ), իսկ «փափուկ ուժի» նյութական կրիչները սոցիալ-տնտեսական պայմաններն են, 2) ոչ նյութական գործոն՝ կրոն, փիլիսոփայություն, մշակույթ, ավանդույթներ և արժեհամակարգ: Այս ամենի շնորհիվ ընդհանուր առմամբ ձևավորվել է «փափուկ ուժի» ընկալման երկու ուղղություն.

1. Արտաքին կամ մակերեսային ընկալումներ՝ հասարակության մեջ ընդունված վարքագծի նորմեր, կենցաղ: Տվյալ ընկալումը հիմնված է արտաքին, առավել նկատելի հատկանիշների վրա:

2. Խորքային ընկալում, որը հսկայական ազդեցություն է թողնում գիտակցական և նույնիսկ ենթագիտակցական մակարդակներում՝ էական փոփոխությունների ու փոխակերպումների ենթարկելով մարդու վաղուց կայունացած կարծրատիպերն ու վարքագիծը:

Արտաքին հատկանիշներն ամենահեշտն են ընկալվում, սակայն, միևնույն ժամանակ, հնարավորություն չունեն ձևավորելու որակապես նոր մշակույթ կամ սոցիալական նոր իրականություն: Այդ պատճառով էլ դրանք չեն կարողանում փոփոխել մարդկանց վարքագիծը և ազդել պետության արտաքին քաղաքական կողմնորոշման վրա: Խորքային ազդեցությունը «փափուկ ուժի» իրականացման առումով շատ ավելի բարդ ու բազմապլանային է: Այն արմատապես փոխում է մտածելակերպն ու գիտակցությունը:

Դրա հետ մեկտեղ՝ նա ընդգծում է, որ Չինաստանում և Ռուսաստանում (այլ երկրներում այդ հասկացության նախնական նշանակությունից ավելի են հեռացել) «փափուկ ուժը» սխալ են հասկանում՝ նույնացնելով «քարոզչության» հետ, մինչդեռ հասկացությունը ավելի լայն է և էականորեն տարբերվում է դրանից: Այն ընկալվում է որպես գրավիչ, դուրեկան, անգամ հմայիչ: «Լավագույն պրոպագանդան,- ավելի ուշ գրում է Նայը՝ քննելով «փափուկ ուժի» նշանակությունը տեղեկատվա-

կան դարաշրջանում,- պրոպագանդան չէ»: Ապա պարզաբանում է. «Վստահությունն է ամենասուղ ռեսուրսը»[4]: Թեպետ հարկ է հավելել՝ այնպիսի վստահությունը, որն ապահովվում է արտաքին քաղաքականության հատուկ գործիքի օգնությամբ, այսինքն՝ չի ենթադրում փոխադարձություն, այլ պահանջում է, որ վստահությունը ձևավորվի «փափուկ ուժի» օբյեկտի մեջ, այլ ոչ թե սուբյեկտի: Ինչ վերաբերում է քարոզչություն իրականացնելուն, պետք է նշել, որ այն ներկայումս էլ լայնորեն կիրառում են «փափուկ քաղաքականության» սուբյեկտները՝ թեկուզ հենց սեփական արժեքները և կենսակերպը ազդեցության միջավայրում ներկայացնելու առումով, ինչը շատ հաճախ ուղեկցվում է նյութական խթաններով:

«Փափուկ ուժին» նման գաղափարները հայտնվել են շատ ավելի վաղ, քան հասկացույթը սկսել է քննարկվել ամերիկյան քաղաքագիտության մեջ: Օրինակ՝ Հ. Մորգենթաուն առանձնացրել է ազգային հզորության ինը տարրեր, որոնց շարքում են ազգային բնավորությունը, ազգային ինքնագիտակցությունը, դիվանագիտության որակը և կառավարության որակը, որոնք սերտորեն կապված են իշխանության ոչ նյութական աղբյուրների, այսինքն՝ «փափուկ ուժի» հետ[5]: Ջ. Նայից գրեթե կես դար առաջ բրիտանացի պատմաբան և միջազգային հարաբերությունների վերլուծաբան Էդվարդ Քարրը նույնպես նկատել էր դրդման ուժի աճող դերակատարումը միջազգային ասպարեզում հարցեր լուծելիս: Ըստ Է. Քարրի՝ գոյություն ունի ուժի երեք տիպ՝ ռազմական, տնտեսական և «կարծիքների վերահսկման ուժ»[6]: Հիրավի ուշագրավ փաստ է, որ Քարրը «կարծիքների վերահսկման ուժի» մասին գրում է 1939 թ., երբ Եվրոպայի և քաղաքակիրթ ամբողջ աշխարհի գլխին բացահայտորեն կախվել էր նացիստական և ֆաշիստական բռնատիրության սպառնալիքը, որը, բնականաբար, իր քաղաքականության մեջ որևէ կերպ չէր կապվում փափուկ ուժի հետ, սակայն XX դարի ժանտախտի ի հայտ գալն ու ընդլայնվելը մեծապես հնարավոր դարձան այդ նույն «կարծիքների վերահսկման ուժի» շնորհիվ, որի մասին ասում էր Է. Քարրը:

Իտալացի մարքսիստ փիլիսոփա Ա. Գրամշին «Բանտային տետրեր»[7] ստեղծագործության մեջ, որը գրել սկսել էր 1929 թ., առաջ քաշեց մշակութային-գաղափարախոսական գերիշխանության (հեգեմոնիայի) հարցը: Այդ տեսությունը տարածում գտավ ամերիկյան և արևմտաեվ-

---

[4] **Nye J.** China's Soft Power Deficit. To Catch up, Its Politics Must Unleash the Many Talents of its Civil Society // https://www.wsj.com/articles/SB10001424052702304451104577389923098678842.

[5] Տե՛ս **Morgenthau H.** Politics Among Nations: The Struggle for Power and Peace, Sixth Edition. Beijing, Peking University Press, 1967, էջ 641:

[6] Տե՛ս **Carr Edward Hallet**. The Twenty Years' Crisis 1919-1939. Palgrave, N.Y., 2001, էջ 102:

[7] Տե՛ս **Грамши А.** Тюремные тетради. М., Изд-во полит. лит., 1991, էջ 560:

րոպական նեոպահպանողականների շրջանում: Տիրապետող դասի իշխանությունը, ըստ Ա. Գրամշիի, հենվում է ոչ միայն բռնության, այլև համաձայնության վրա: Գերիշխանությունը նա սահմանում է որպես բարյացակամ, ակտիվ համաձայնություն, որի պարագայում քաղաքացիները ցանկանում են այն, ինչ հարկավոր է իշխող դասին: Այն հենվում է «Մշակութային միջուկի» վրա, ուստի հեղափոխություն անելու համար անհրաժեշտ է «մոլեկուլյար» ազդեսիա այդ միջուկի նկատմամբ, որը պետք է ընթանա աննկատ, անընդհատ կրկնվող գրքերի, բրոշյուրների, թերթային հոդվածների, վեճերի ու զրույցների միջոցով:

Ի տարբերություն գիտության մեջ նախկինում գոյություն ունեցող հասկացությունների (գերիշխանություն, գաղափարախոսություն, հանրային դիվանագիտություն)՝ «փափուկ ուժը» քաղաքական գիտության տեսանկյունից առավել հաջողված սահմանումն է, որը նշանակում է արտաքին քաղաքական իշխանական պաշար: «Գերիշխանություն» հասկացությունը, ըստ Ա. Գրամշիի, անկասկած տարբերվում է «փափուկ ուժ» հասկացությունից: Ըստ ընդունված իմաստի՝ գերիշխանությունը, որ ի սկզբանե աղերսներ ուներ հունական պոլիսների գերազանցության հետ, նշանակում է ուժի, ազդեցության գերազանցություն, ինչը ապահովվում է «փափուկ» և «կոշտ» ուժերի հմուտ կիրառման արդյունքում: «Գաղափարախոսություն» հասկացությունն օժտված է իմաստային այլ հագեցածությամբ, քան «փափուկ ուժը», սակայն դրանք սերտորեն կապված են: Մի կողմից՝ «փափուկ ուժի» բովանդակությունը ձևավորվում է որոշակի գաղափարախոսության համատեքստում, մյուս կողմից՝ գաղափարախոսության գրավչությունը մեծացնում է պետության «փափուկ ուժը»: Ճշմարիտ է նաև այն, որ ազգային գաղափարախոսության գրավչությունը նվազեցնում է հասարակության ընկալունակությունը այլ երկրների «փափուկ ուժի» գործիքների ազդեցության նկատմամբ: Ինչ վերաբերում է «հանրային դիվանագիտություն» հասկացությանը, ապա այն «փափուկ ուժ» հասկացությունից ավելի նեղ է և միայն գործիք է դրա իրականացման համար:

Նկատելի է, որ գերիշխանության մասին Ա. Գրամշիի և «փափուկ ուժի» մասին Ջ. Նայի ուսմունքների միջև կան շատ նմանություններ: Օրինակ՝ երկու հասկացություններում էլ առանձնացվում է ազդեցության երկու տեսակ՝ համաձայնություն և բռնություն Ա. Գրամշիի ուսմունքում, «փափուկ» և «կոշտ» ուժեր՝ Ջ. Նայի: Երկուսն էլ շեշտում են մշակույթի, արժեքների, ավանդույթների մեծ նշանակությունը գերիշխանության հասնելու հարցում: Երկուսն էլ ընդգծում են քաղաքացիական հասարակության հսկայական դերը, որի շնորհիվ ձևավորվում, ապահովվում է պետության ազդեցությունը: Սակայն նշյալ հասկացությունների միջև կան տարբերություններ: Ա. Գրամշին, գտնվելով կոմունիստական գաղափարախոսության տիրույթում, ենթադրում է, որ գերիշխանությունն անհրաժեշտ է ներքաղաքական նպատակի՝ իշխող դասի

իշխանությունն ապահովելու համար: Ջ. Նայը, ընդհակառակը, «փափուկ ուժը» դիտում է որպես ներգործության միջոց առավելապես միջազգային ասպարեզում: Բացի այդ, կարելի է նշել իշխանությունը վարելու «փափուկ» գործիքների ազդեցության տարբերությունները: Ջ. Նայի «փափուկ ուժը» աչքի է ընկնում դրական նշանակությամբ. այն կոչված է ստեղծելու գրավիչ կերպար՝ դաշնակիցներ գրավելու և դաշինք ձևավորելու համար: Գրամշին այն պատկերացնում է բացասական նշանակությամբ. դա իշխող դասի ուժն է, որին հարկավոր է տապալել՝ ներգործելով նրա վրա իր իսկ հնարքներով՝ քայքայելով «մշակութային միջուկը», աստիճանաբար հող նախապատրաստելով հեղափոխության համար:

Քաղաքական տեսության մեջ «փափուկ ուժը» դիտարկվում է նաև որպես աշխարհի աղավաղված պատկերը ստեղծելու ունակություն՝ հարկադրելով ակտորին, որի վրա գործադրվում է տվյալ ազդեցությունը, կայացնել ներգործություն իրականացնողի համար նպաստավոր քաղաքական որոշումներ: Ջ. Գալարոտիի կարծիքով, «փափուկ ուժի» նմանօրինակ ըմբռնումը հոգեհարազատ է գերիշխանության մասին Ա. Գրամշիի հայեցակարգին: Այդ ամենը ձևավորում է «փափուկ ուժի» ևս մեկ՝ հաճախ քննադատվող հիմք՝ կեղծ գիտակցությունը: Նշյալ կատեգորիան ենթադրում է, որ գերիշխող ազգը կեղծ գիտակցություն է ձևավորում այլ՝ ենթադաս ազգի շրջանում: Լիբերալ տեսության գաղափարը ենթադրում է, որ «փափուկ ուժը» տալիս է գաղափարախոսությունների և կողմնորոշումների ընտրություն նրան, ում այն ուղղված է: Վերջինս ուղղակի պետք է ընտրի ամենափոխլրացնող դաշնակցին և ամենաընդունելի գաղափարախոսությունը: Սակայն կյանքը ցույց է տալիս, որ դա անհնար է, քանի որ նման որոշումներ ընդունվում են կա՛մ անձնիշխան եղանակով, կա՛մ մոլորության վրա հենվելով: Արդյունքում «փափուկ ուժը» դադարում է ազդեցության լիբերալ գործիք լինելուց, որովհետև դրա մեջ ի սկզբանե առկա է շահերի բախում և մանիպուլյացիայի տարր[8]: Այս պարագայում կարևոր է պարզաբանել նաև ուժ (իշխանություն) և գերիշխանություն եզրույթները: Առաջինը որոշակի փոխհամաձայնություն և փոխադարձ շահ է նշանակում՝ թեկուզ և ժամանակ առ ժամանակ հիմնված անիրավաչափ փոխանակության վրա: Իսկ գերիշխանությունը հաստատվում է շահերի բախմամբ ու կոնֆլիկտով և ենթադրում է ոմանց ենթարկվելը մյուսներին: Այսպես, Ջ. Գալարոտին կարծում է, որ փափուկ ուժը կապված է Մ. Ֆուկոյի տեսության հետ, որի հիմքում հենց նույն շահերի կոնֆլիկտն է: Ընդ որում, ըստ Ջ. Գալարոտիի, «փափուկ ուժի» յուրահատկությունը հաճախ պայմանավորված է գերիշխող ազգի ունակությամբ՝ իր շահերը ներկայացնելու իբրև այն երկրների շահեր, որոնց վրա գործադրվում է

[8] Տե՛ս **Галларотти Дж.** Бремя могущества как парадокс мировой политики // Полис, 2011, № 3 (123), էջ 60:

ազդեցությունը: Սրա հետ մեկտեղ՝ նշյալ քաղաքականությունն իրականացնող ինստիտուտները կարող են օժտված լինել ինքնավարության որոշակի աստիճանով[9]:

Ջ. Նայից մեկ տասնամյակ առաջ գրեթե նույն բանն էին ասում հայտնի «անգլիական դպրոցի» ներկայացուցիչները, մասնավորապես Հեդլի Բուլը, որը առաջ քաշեց ազգային շահերը պաշտպանելիս ֆիզիկական բռնությունը նվազագույնի հասցնելու և քաղաքական, իրավական ու մարդասիրական բնույթի այլընտրանքային մեթոդների վրա գերազանցապես շեշտադրում կատարելու անհրաժեշտության մասին հարցը[10]:

Հիշատակելի են ևս երկու հեղինակներ, որոնց տեսությունները համահունչ են «փափուկ ուժի» հասկացությանը: Առաջինը Ժ. Բոդրիարի[11] գայթակղման հայեցակարգն է, մյուսը՝ Ժիլ Լիպովեցկիի[12] հրապուրման հայեցակարգը: Վերջինս, մասնավորապես, ներառում է քաղաքական հրապուրումը որպես քաղաքական տեխնոլոգիաների գործիք: Կարծում ենք, որ Ա. Գրամշիի, Ջ. Նայի, Ժ. Բոդրիարի, Ժ. Լիպովեցկիի հայեցակարգերը գտնվում են միևնույն խոսույթային դաշտում՝ ներառելով գայթակղման, հրապուրման, գրավման, խորհրդանշական ազդեցության հասկացությունները: Հիշյալ ուժերի ներգործության արդյունքում սուբյեկտները իշխանական ատյանների առաջարկություններն ընկալում են որպես ներքին կամավոր, ազատ ընտրություն:

Որպես «փափուկ ուժի» պաշարներ Ջ. Նայը առանձնացնում է զաղափարախոսության գրավչությունը, միջազգային ինստիտուտները, իսկ ավելի ուշ՝ մշակույթը (այնտեղ, որտեղ այն գրավիչ է ուրիշների համար), քաղաքական արժեքները (երբ դրանք հանրաճանաչ են երկրի ներսում ու արտերկրում) և արտաքին քաղաքականությունը (երբ այն համարում են լեգիտիմ, բարոյական հեղինակություն վայելող)[13]:

Հետազոտողներից շատերը, հիմնվելով Ջ. Նայի տվյալ դասակարգման վրա, հակված են «փափուկ ուժի» այդ ռեսուրսների շարքից առավել մեծ ուշադրություն դարձնելու մշակույթի գրավչությանն ու կենսակերպին: Նրանք միջազգային ասպարեզում ուշադրություն գրավելու ԱՄՆ-ի ունակությունը բացատրում են ոչ միայն ռազմական ու տնտեսական ներուժով, այլև ամերիկյան արագ սննդի, կինոֆիլմերի, երաժշտության և զանգվածային մշակույթի այլ դրսևորումների հանրաճանաչությամբ: Սակայն հարկ է նշել, որ նյութական աշխարհի այդ արտաքուստ սովորական օբյեկտները առաջին հերթին որոշակի ար-

---

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 63:

[10] Տե՛ս **Bull H.** The Anarchical Society: A Study of Order in World Politics. N.Y.: Macmillan, 1977:

[11] Տե՛ս **Бодрийяр Ж.** Соблазн, М., Издательство Ad Marginem, 2000, էջ 318:

[12] Տե՛ս **Липовецки Ж.** Империя эфемерного. Мода и ее судьба в современном обществе, М., Новое литературное обозрение, 2012, էջ 336:

[13] Տե՛ս **Nye J.** Soft Power. The means to success in World Politics. էջ 10:

ժեքներ կրողներ են, իսկ դրանք աշխարհին ներկայացնելը առօրյա քարոզչական գործունեության ձև է ստանում: Դրա հետ մեկտեղ՝ այն կարող է լինել ոչ բավականաչափ արդյունավետ, ինչը հաստատվում է ԱՄՆ-ում XXI դ. սկզբին «փափուկ ուժ» երևույթի թուլացմամբ, դրսևորվում է աշխարհում հակաամերիկյան տրամադրությունների սաստկացմամբ՝ ամերիկյան զանգվածային մշակույթի հանրաճանաչության պահպանմամբ հանդերձ[14]:

Վարքի որոշակի չափանիշներ, կանոններ ու նորմեր արմատավորելը, որոնցով պետք է առաջնորդվեն պետությունները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունն իրականացնելիս, և որ կարևոր է՝ դրանց համընդհանրականի և համակիրառելիի կարգավիճակ տալը, այդ նորմերը քարոզող համապատասխան միջազգային ինստիտուտներ ստեղծելը, այս ամենը Ջ. Նայի կողմից «փափուկ ուժի» յուրովի ընկալման արտահայտություն է, ինչը դրսևորվում է հատկապես ԱՄՆ-ի և արևմտյան որոշ երկրների արտաքին քաղաքական գործունեության մեջ: Զանգվածային մշակույթը, տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստում են այդ նորմերը սերմանելուն:

Հենց միասնականացված արժեքների ու նորմերի պարտադրման հարցը ստիպեց Նային ևս մեկ անգամ վերանայել իր մոտեցումը «փափուկ ուժին»՝ գտնելով մի ինչ-որ փոխզիջումային լուծում: Նրա կարծիքով, «փափուկ ուժի» ազդեցությունը կարող է լինել ինչպես ագրեսիվ, այպես էլ ոչ ագրեսիվ բնույթի: Առաջին դեպքում գործ ունենք արևմտյան երկրների զանգվածային մշակույթի հետ, երկրորդ դեպքում՝ առանձին վերցրած յուրաքանչյուր երկրի ազգային մշակույթի հետ: Պետության կողմից «փափուկ ուժ» կիրառելու ռազմավարությունը դիալեկտիկական գործընթաց է, որում զանգվածային մշակույթը, որը «փափուկ ուժի» գլխավոր բաղադրիչն է, սովորական սպառողներին է ներկայանում որպես բոլորի համար ընդունելի և համակիրառելի, իսկ ազգային մշակույթը ձեռք է բերում տեղայինի կարգավիճակ, այսինքն՝ ընդունելի միայն տվյալ ժողովրդի համար[15]: Այսպես, համակիրառելի և ազգային մշակույթները գոյություն ունեն զուգահեռ, առանձին վերցրած յուրաքանչյուր պետությունում, որի խնդիրն է քաղաքականության այլ սուբյեկտների կողմից չենթարկվել միասնականացման և պահպանել սեփական մշակույթը: Ջ. Նայը փորձեց այդ եղանակով վերակենդանացնել իր հայեցակարգը, սակայն, ինչպես նշում են բազմաթիվ վերլուծաբաններ, այդ հարցում Նայը զգալի հաջողությունների չհասավ:

Քննադատաբար տրամադրված հետազոտողները «փափուկ ուժը» համարում են երերուն՝ «կոշտ ուժի» համեմատ, ընդգծում են դրա ան-

---

[14] Տե՛ս **Радиков И., Лексютина Я.** «Мягкая сила» как современный атрибут великой державы // МЭиМО : Мировая экономика и международные отношения, 2012, № 2, էջ 20:

[15] Տե՛ս **Nye J.** Soft Power: The Means to Success in World Politics, էջ 12:

հարմար լինելը, քանի որ «փափուկ ուժի» ռազմավարությունների իրական հաջողությունը հնարավոր չէ պատկերել դրամական արտահայտությամբ կամ վիճակագրությամբ: Նրանք մատնանշում են այն, որ գոյություն ունեն հակամարտություններ, որոնք հնարավոր չէ լուծել ոչ ուժային միջոցներով: Ամենամեծ անհարմարությունը, որը պատճառում է «փափուկ ուժի» կիրառումը, պետության կողմից դրա լիակատար վերահսկողության անհնարինությունն է՝ ի տարբերություն երկրի զինված ուժերի: Բացի այդ, դա ոչ միայն անվերահսկելի, այլև ոչ ճշգրիտ զենք է. հնարավոր չէ բացարձակ հավանականությամբ կանխատեսել՝ արդյո՞ք «փափուկ ուժի» ռազմավարությունները արդյունավետ կլինեն աշխարհի որոշակի տարածաշրջանում տեղային համատեքստի ազդեցության պարագայում[16]:

«Փափուկ ուժի» քննադատների մյուս, ոչ պակաս կարևոր վերապահումը մնում է միասնականացված և որոշակի գաղափարախոսությունների հարմարեցված արժեքներ ներդնելու խնդիրը: Նրանց կարծիքով, այդ գործընթացը չի կարող բարեհաջող ծավալվել և չառաջացնել դիմադրություններ առանց հարկադրանքի մշակված ձևերի կիրառման: Բ. Մատերնը պնդում է. «Համաշխարհային քաղաքականության մեջ գրավչության հասնում են իշխանության ոչ ֆիզիկական, բայց նայնպես հարկադրական ձևերով... Ուստի փափուկ ուժը չպետք է հասկանալ կոշտ ուժի հետ համադրելու միջոցով, այլ ավելի շուտ՝ իբրև դրա շարունակություն այլ ձևերով»[17]:

Դրա հետ մեկտեղ՝ «փափուկ ուժ» կիրառելը բնորոշ է ոչ միայն արդի համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոններին: Այն կարող են կիրառել նաև քաղաքականության ոչ այնքան ծանրակշիռ սուբյեկտները՝ ի պաշտպանություն իրենց շահերի, որոնք չեն կարող ուղղված լինել այլ օբյեկտների ենթարկեցնելուն: Ռուս հետազոտող Կ. Ի. Կոսաչևը կարծում է. ««Փափուկ ուժը» բնավ ոչ միշտ է կապված պետության տարածքի մեծության, տնտեսական կամ ռազմական հզորության, գաղափարախոսության հետ: Կարելի է, օրինակ, լինել առաջատար տվյալ երկրում քաղաքացիների կյանքի միջին տևողության ցուցանիշով, աշխատավարձի ու կենսաթոշակների մակարդակով, բիզնես վարելու վարկանիշներով, ազգային արժույթի հուսալիությամբ, բնապահպանական չափանիշներով, կրթության մատչելիությամբ ու մակարդակով, առանց պատերազմների ու աղետների պետության գոյավարման տևողությամբ և բազմաթիվ այլ չափորոշիչներով, որոնք ձևավորում են պետության հեղինակությունն ու համբավը այլ ժողովուրդների ընկալումներում: Եվ այստեղ փոքրերը շատ հա-

[16] Տե՛ս **Gray C.S.** Hard power and soft power: the utility of military force as an instrument of pol-icy in the 21st century // http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/PUB1059.pdf

[17] **Vuving A. L.** How soft power works / A. L. Vuving // American Political Science Association annual meeting. Toronto, 2009, էջ 11:

ճախ հաղթում են մեծերին բազմաթիվ ցուցանիշներով»[18]:

«Փափուկ ուժը» քննադատելու փորձերի օրինակները այնուամենայնիվ քիչ են: «Փափուկ ուժին» նվիրված աշխատանքների գերակշիռ մասում պատմական շարժընթացը վերլուծելիս շեշտվում է «փափուկ ուժի» նշանակության աճը միջազգային հարաբերություններում և «կոշտ ուժի» կարևորության նվազումը: Նշյալ միտումը պայմանավորված է Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջ բերած ավերածությունների գիտակցումով և դրանից բխող՝ Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումով, որը կոչված էր զերծ պահելու ապագա սերունդներին պատերազմի աղետներից: Պետությունների զարգացման առաջնահերթությունը դարձել է նրանց մրցունակության ապահովումը՝ գերազանցապես ոչ ռազմական մեթոդների օգտագործմամբ:

«Փափուկ ուժի» հայեցակարգի նկատմամբ նոր մոտեցումներ մշակողների մեջ բավականին մեծ է ասիացի հետազոտողների թիվը: Նրանց համար վճռորոշ նշանակություն ունեն երկու գործոններ, որոնք «փափուկ ուժը» դարձնում են քաղաքականության արդիական գործիք. 1) բարդություններ են ծագում արևմտյան (ԱՄՆ, Եվրոպա) և ասիական (հինդուիստական, կոնֆուցիական, մահմեդական աշխարհներ) կրոնամշակութային քաղաքակրթական գաղափարների միջև: Այդ դեպքում «փափուկ ուժը» առճակատման ճանապարհով չընթանալու հնարավորություն է, այն թույլ է տալիս «փափուկ» մրցակցություն ծավալել միջազգային ասպարեզում դրական իմիջ ձևավորելիս՝ օգտագործելով հումանիտար, մշակութային, տնտեսական բնույթի մեխանիզմներ[19], 2) «փափուկ ուժը» գործառում է ոչ միայն միջազգային, այլև ներազգային տարածքում, ուստի այն կարելի է օգտագործել հասարակությանը համախմբող գաղափարներ առաջադրելու համար, ինչը զարգացման առանցքային գործոն է: Այսինքն, չնայած այն բանին, որ տվյալ հայեցակարգը վերաբերում է միջազգային հարաբերությունների տեսության ոլորտին, այն լիովին կարելի է կիրառել նաև ներքին քաղաքականության մեջ: «Փափուկ ուժը» ի զորու է համախմբելու մարդկանց, նպաստելու սոցիալական հարաբերությունների կայունացմանը, թուլացնելու անվստահությունը սոցիալական տարբեր շերտերի, տարիքային և դավանանքային խմբերի միջև: Այդ ունակությունը բարձր են գնահատում ասիական երկրների հետազոտողներն ու քաղաքական գործիչները: Այն կարող է լայնորեն կիրառվել նաև հայկական իրականությունում՝ ապահովելու ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայության միասնությունը:

---

[18] **Косачев К. И.** «Мягкая сила» и европейское измерение российской внешней политики // http://rs.gov.ru/sites/rs.gov.ru/files/bryussel-zaydel.pdf

[19] Տե՛ս **Каримова Г. И.** Возможности применения стратегии «мягкой силы» в рамках азиатских цивилизационных пространств // http://cps.uz/analitika-i-publikatsii/vozmozhnosti-primeneniya-strategii-%C2%ABmyagkoi sily%C2%BB-v-ramkakh-aziatskikh-tsivi

«Փափուկ ուժի» վերլուծության առումով կարևոր դերակատարում ստանձնեց նշյալ երևույթի հետազոտման չինական դպրոցը: Սկսած 2003 թ.-ից՝ ՉԺՀ-ի ղեկավարությունը, ի դեմս ՉԿԿ ԿԿ-ի, սկսեց մշակել հայեցակարգ, որը հիմնավորում էր Չինաստանի տեղը ժամանակակից աշխարհում: Օ. Բորոխի և Ա. Լոմանովի համատեղ հետազոտության համաձայն՝ արտաքին ներկայության չինական գաղափարախոսությունը մի քանի փոխակերպում է ապրել՝ «խաղաղ վեհության» և «խաղաղ զարգացման» մոդելից մինչև «միասնական բարգավաճում ներդաշնակ աշխարհում» հայեցակարգը, որն առաջադրել էր ՉԺՀ նախկին ղեկավար Հու Ցզինտաոն[20]: Ներկայումս Չինաստանը լիովին համապատասխանում է չինական կոմկուսի գործող ղեկավար Սի Ցզինփինի ձգտմանը դեպի «նոր դարաշրջան», որը նա անվանում է «ընդհանուր ճակատագրերի հանրակցություն»:

Ինչպես գրում է Յույ Կեպինը, առաջ քաշելով «ներդաշնակ աշխարհի» գաղափարը, չինական կառավարությունը ելնում է այն բանից, որ նման արժեքային իդեալի ձգտում է ամբողջ մարդկությունը, իսկ «խաղաղությունն ու զարգացումը՝ որպես այժմեականության երկու մեծ թեմաներ, ներդաշնակ աշխարհ կառուցելու կարևորագույն բովանդակությունն են»[21]: Ընդ որում, տնտեսական գլոբալացման խորացմանը զուգընթաց, պետությունների ու ժողովուրդների շահերը դառնալու են ավելի բազմապլան, քաղաքականությունը՝ ավելի բազմաբևեռ, մշակույթը՝ ավելի բազմազան: Հետևաբար, ընդգծում է չինացի քաղաքագետը, երկրների ու ժողովուրդների միջև ավելի ու ավելի պահանջված կլինեն հանդուրժողությունն ու հարգանքը, խաղաղ գոյակցությունը, հին չինական կոնֆուցիական գաղափարը՝ «միասնություն՝ առանց միասնականացման»[22]: Այդ պնդումը հիմնովին հակասում է Ջ. Նայի դավանած հիմնական սկզբունքին և ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության վարած «փափուկ ուժի» քաղաքականությանը: Արդի քաղաքական համատեքստում այդ արտահայտությունը կարող է մեկնաբանվել որպես Չինաստանի ցանկություն՝ զարգացնելու համագործակցությունը Արևմուտքի հետ՝ առանց դիրքավորվելու իբրև Արևմուտքի դաշնակից (միասնություն) և առանց ճանաչելու արևմտյան արժեքները (միասնականացում):

Չինացի հետազոտողները մատնանշում են «փափուկ ուժի» գաղափարի պատմական արմատները, որոնք կարելի է գտնել երկրի պատմության մեջ: Այստեղից էլ՝ նշյալ հասկացույթի ներդաշնակության, բնականության մասին թեզը չինական հասարակության համար: Ամենահին աղբյուրներից են համարվում Լաո Ցզիի (Ք. ա. VII դ.) ա-

---

[20] Տե՛ս **Борох О., Ломанов А.** Скромное обаяние Китая, Pro et Contra, 2007, № 6 (39), էջ 41–60:

[21] Նույն տեղում, էջ 44:

[22] Նույն տեղում:

սույթները, օրինակ՝ «Աշխարհում չկա ոչինչ ավելի փափուկ, քան ջուրը, բայց հենց այն է ի զորու քայքայելու ամենակարծր առարկաները»[23]: Ուշագրավ է, որ չինացի հետազոտողները կառուցում են «փափուկ ուժի» ժամանակակից տեսությունը՝ ելնելով հենց այդ փիլիսոփայի գաղափարներից և եզրակացնելով, որ «փափուկ ուժը» չինական մշակույթի բնական բաղկացուցիչն է: Սուն Ցզիի «Պատերազմի արվեստը» տրակտատում ևս կան համանման ձևակերպումներ. «Օգտագործիր փափուկ միջոցներ՝ ուժը հաղթահարելու համար», «Խուսափիր հակառակորդի ուժեղ կողմերից, օգտվիր նրա թուլությունից»[24]: Նման մտքեր հանդիպում են նաև Կոնֆուցիոսի ուսմունքում: Սակայն նրանցից ոչ մեկի մոտ էլ այդ հայեցակարգն ամբողջական տեսության տեսք չի ստացել:

«Փափուկ ուժի» չինական ըմբռնումը շատ դեպքերում Ջ. Նայի առաջադրած հասկացութային շրջանակների շարունակությունն է: Չինացի վերլուծաբանների գերակշիռ մասը հետևում է Նայի սահմանմանը: Նրանք ևս զգալիորեն ընդունում են Ջ. Նայի սահմանած «փափուկ ուժի» պաշարները՝ մշակույթ, քաղաքական արժեքներ և արտաքին քաղաքականություն:

Դուրս ելնելով Ջ. Նայի հասկացութային սահմանման շրջանակներից՝ չինացի վերլուծաբանները ստեղծում են «փափուկ ուժի» իրենց մոդելները: Օրինակ՝ առանձնացնում են «փափուկ ուժի» երեք աղբյուրներ. 1) ինստիտուցիոնալ իշխանություն (պետության ունակությունը առաջարկելու և հիմնադրելու միջազգային նոր ինստիտուտներ), 2) նույնականացնող իշխանություն (պետության ազդեցությունը այլ երկրների վրա իր առաջատար դերը ճանաչել տալու միջոցով), 3) միաձուլող, այսինքն՝ մշակութային արժեքները, գաղափարախոսությունը, սոցիալական համակարգը դեպի իրեն ձգող իշխանություն[25]: Չինական խոսույթի առանձնահատկությունը «փափուկ ուժը» ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականության մեջ կիրառվող գործիք դիտելու հակվածությունն է: Չինացի վերլուծաբանները հակված են «փափուկ ուժը» դիտելու որպես ազգային համախմբման ու նույնականացման, հասարակական բարոյականության ամրապնդման, կրթության որակի բարելավման միջոց՝ ի շահ ներքաղաքական ինստիտուցիոնալ շինարարության[26]:

Ժամանակակից չինացի տեսաբանները մեծ ուշադրություն են դարձնում այդ երևույթի գործնական կիրառմանը: Աշխատելով համաշխարհային քաղաքական գործընթացների հետազոտությամբ

---

[23] «Великие о воде» // http://www.cawater-info.net/bk/12-7.htm

[24] **Бобыло А.** “Мягкая сила” в международной политике: особенности национальных стратегий / Евразийство и мир, Улан-Удэ, 2014, № 4, с. 47.

[25] Տե՛ս **Li M.** Soft Power in Chinese Discourse: Popularity and Prospect // Soft power. China’s Emerging Strategy in International Politics. New York: Lexington books, 2009, էջ 25:

[26] Տե՛ս նույն տեղը, էջ 34:

զբաղվող աշխարհի խոշոր կենտրոններում՝ չինացի հետազոտողներն առաջարկում են նշյալ վերլուծության իրենց ուղղությունները, որոնց նյութը բավականին առանձնահատուկ է՝ ի դեմս Աֆրիկայի և Հարավարևելյան Ասիայի: Այդպիսի օրինակներ են գիտնականներ Յոնգժին Չժանի, Չժան Ցզիի, Սան Խունի, Չժեն Յուննյանի, Չժան Լիի, Յան Սյուետունի, Յույ Սինտյանի[27] և այլոց հետազոտությունները:

Չինացի հետազոտող Յոնգժին Չժանը նշում է, որ Չինաստանի գրավչությունը Եվրոպայում և ԱՄՆ-ում տարբեր ժամանակաշրջաններում տատանվել է լրիվ անտարբերությունից մինչև զանգվածաբար չինական մշակույթով հրապուրվածության միջակայքում: Նա, ինչպես որ շատերը, կարծում է՝ «փափուկ ուժի» առանցքային հասկացությունը պետք է դառնա դրա ներուժը բնութագրող հասկացույթը, որը հենվում է դիվանագիտությունը վարելու պատմամշակութային ավանդույթների վրա[28]: «Փափուկ ուժի» ներուժը, համաձայն չինական ակադեմիական ավանդույթի, ինչ-որ առումով երկրի պատմականորեն ձևավորված համբավն է, որով կողմնորոշվում են նրա արտաքին գործընկերները հաստատված նորմերի ու ավանդույթների շրջանակներում երկխոսություն ձևավորելիս:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «փափուկ ուժի» հասկացույթը հաստատուն կերպով ամրապնդվել է գիտական գրականության մեջ: Պատճառն այն է, որ այն օգտակար է եղել ժամանակակից միջազգային հարաբերություններում տեղ գտած միտումները համարժեքորեն իմաստավորելու և բացատրելու համար: Մեր կարծիքով, «փափուկ ուժի» բովանդակությունը կարելի է համարել հատկապես սուբյեկտի կենսակերպի (դրա բարձր մակարդակի) քարոզչությունը, որը, ի տարբերություն «կոմունիստական պրոպագանդայի», ժամանակակից պայմաններում իրականացվում է ավելի նուրբ ու արտաքուստ անբռնազբոս ձևով: Նույնպիսի քարոզչական աշխատանք իրականացվում է ժո-

---

[27] Տե՛ս 张骥, 桑红 文化：国际政治中的 «软权力» (**Чжан Цзы, Сан Хун.** Культура: «мягкая власть» международной политики) // 社会主义研究 (Исследования социализма), 1999, № 3, էջ 41-44; 郑永年, 张弛 国际政治中的软力量以及对中国软力量的观察 (**Чжэн Юннянь, Чжан Чи.** Мягкая сила международной политики и анализ мягкой силы Китая) // 世界经济与政治 (Мировая экономика и политика), 2007, № 7, էջ 6-12; 俞新天 软实力建设与中国对外战略 (**Юй Синьтянь.** Строительство «мягкой силы» и внешнеполитическая стратегия Китая) // 国际问题研究 (Исследования международных проблем), 2008, № 2, էջ 15-20; 阎学通 文化资源需要政治运用 – 对“软实力的核心是政治观实力”讨论中某些问题的解释 (**Янь Сюетун.** Культурному источнику необходимо политическое применение – разъяснение некоторых вопросов дискуссии «Ядро мягкой силы – политическая власть») // 环球时报 (Глобальное время), 2007 // http://www.huaxia.com/wc/gjrd/2007/00624741.html

[28] Տե՛ս **Yongjing Zhang**. The Discourse of China’s soft power and its Discontents // Soft Power. China’s Emerging Strategy in International Politics. New York: Lexington books, 2009, էջ 50:

ղովուրդներին որոշակի գաղափարախոսություն ներարկելու ուղղությամբ, որը պատկերանում է միասնականացված արժեհամակարգի տեսքով՝ ընդգրկելով հասարակական հարաբերությունների ինչպես սոցիալ-տնտեսական և քաղաքական, այնպես էլ հոգևոր ոլորտները: Սակայն տվյալ դեպքում անհրաժեշտ է ներգործության սուբյեկտի քաղաքացիների բարձր կենսամակարդակի և, որ հատկապես կարևոր է, արժեքային կողմնորոշումների հասկանալի, հոգեհարազատ և ընդունելի համալիրի առկայություն: «Փափուկ ուժի» քաղաքականության բովանդակությունը անկասկած ներառում է նաև ներգործության սուբյեկտների մշակութային կյանքը, որի արդյունքը լինում է ոչ միայն լայն տարածումը, այլև երբեմն նաև «էքսպանսիոնիստական» մշակույթի տարրերի գերակշռությունը: Ընդհանուր առմամբ, «փափուկ ուժի» քաղաքականության վերջնական նպատակը քաղաքականության օբյեկտների շրջանում սուբյեկտին նմանվելու ձգտում առաջացնելն է, նրանց մեջ վերջինիս նկատմամբ ձգտում ներարկելը և ի հետևանս դրա՝ ինքնակամ նրանց քաղաքականությանը ենթարկվելը:

Սակայն «փափուկ ուժի» քաղաքականությանը կարող են դիմել ոչ միայն բարեկեցության բարձր մակարդակ և գրավիչ արժեհամակարգ ունեցող սուբյեկտները: Տվյալ դեպքում մեծ նշանակություն կարող է ունենալ հսկայական նյութական միջոցների առկայությունը, որոնք օգտագործվում են այլ երկրների իրենց կողմը գրավելու նպատակով՝ տարբեր սոցիալ-տնտեսական նախագծերում նրանց ներգրավելու, հանրային դիվանագիտության ուղիներն ընդլայնելու, ինչպես նաև արդար աշխարհակարգ հաստատելու և իրավահավասար համագործակցության վերաբերյալ գաղափարներ քարոզելու միջոցով, և, ի վերջո, ռազմական-ռազմավարական օգնություն ցուցաբերելով: Այդ ամենը զուգահեռաբար ստեղծում է անհրաժեշտ պայմաններ կամավոր հիմունքներով մշակութային «էքսպանսիայի» համար: Ինչպես տեսնում ենք, նման դեպքերում ծանրության կենտրոնը տեղափոխվում է ներգործման օբյեկտներին՝ գործընկերներին նյութապես խթանելու և լայնորեն ռեսուրսներ օգտագործելու հարթություն, որի պարագայում քաղաքականության մեջ «փափուկ» և «կոշտ» գործոններն ակներևաբար համակցվում են:

Բանալի բառեր – *փափուկ ուժ, կոշտ ուժ, հասկացույթ, արտաքին քաղաքականություն, մշակույթ, արժեքներ, հասարակություն, միջազգային հարաբերություններ, համաշխարհային քաղաքականություն, ազդեցություն*

ПАЙЛАК ЕНГОЯН – *Формирование современной концепции «мягкой силы» в политической науке*. – Профессор Гарвардского университета Джозеф Най впервые раскрыл концепт «мягкой силы», под которой он понимал способность государства формировать предпочтения других акторов мировой политики, используя собственную привлекательность в их глазах. Это относилось к культуре, политическим ценностям и внешней политике США. Становилось

очевидно, что применение военной силы ограничено, а потребность в увеличении своего влияния оказывается не вполне реализованной.

Идеи, схожие по своему действию с «мягкой силой», появились задолго до того, как концепт начал обсуждаться в американской политологии. В этом смысле следует отметить работы Г. Моргентау, Э. Карра, итальянского философа-марксиста А. Грамши и др. К подобным концепциям можно отнести «концепцию соблазна» Ж. Бодрийяра, а также «концепцию обольщения» Ж. Липовецки.

Вслед за Дж. Наем исследователи разных стран сделали «мягкую силу» предметом своего исследования. Их позиции далеко не однозначны. Важной представляется китайская школа изучения данного феномена, указывающая на исторические корни идеи «мягкой силы». Отсюда – тезис о гармоничности, естественности данного концепта для китайского общества.

Ключевые слова: *мягкая сила, жесткая сила, концепт, внешняя политика, культура, ценности, общество, международные отношения, мировая политика, влияние*

PAYLAK YENGOYAN – *The Formation of the Modern Concept of "Soft Power" in Political Science.* – Harvard University Professor Joseph Nye first revealed the concept of "soft power" which he describes as an ability of a state to form preferences of other actors of world policy using its attractiveness for them. This is connected with culture, political values, and the foreign policy of the USA. It is becoming obvious that the efficiency of using military forces is substantially limited, and the need for states to increase their influence cannot fully be realized.

Ideas that in their essence are close to "soft power", appeared long before American political scientists started the discussion of the concept. It is necessary to pay attention to the works of G. Morgenthau, E. Carr, the Italian Marxist philosopher A. Gramsci, and others. Such concepts include the "concept of seduction" by J. Baudrillard, as well as the "concept of seduction" by Gilles Lipovetsky.

Following John Hiring, researchers from different countries have made "soft power" the subject of their research. However, their positions concerning this concept are far from being unambiguous, and sometimes contradictory. An important rethinking about "soft power" is the Chinese school of research of this phenomenon. Chinese researchers point to the historical roots of the idea of "soft power", which can be found in the country's history, and that this concept is harmony and naturalness for Chinese society.

Key words: *soft power, hard power, concept, foreign policy, culture, values, society, international relations, world policy, influence*

Ներկայացվել է՝ 25.04.2020, Գրախոսվել է՝ 15.05.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020